



Հ Ա Յ Ա Ս Տ Ա Ն Ի Հ Ա Ն Ր Ա Պ Ե Տ ՈՒ Թ Յ Ա Ն
Կ Ե Ն Տ Ր Ո Ն Ա Կ Ա Ն Բ Ա Ն Կ Ի Խ Ո Ր Հ ՈՒ Ր Դ

Ո Ր Ո Շ ՈՒ Մ

ԿՈԴ
050.0006 Ն. 24.01.23

24 հունվարի 2023 թվականի թիվ 6-Ն

ԲԱՆԿԵՐԻ ԿԱՊԻՏԱԼԻ ՀԱԿԱՑԻԿԼԻԿ ՇԵՄԻ ՉԱՓԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ
(2022 թվականի չորրորդ եռամսյակ)

Նպատակ ունենալով ապահովել ֆինանսական համակարգի կայունությունը,
ղեկավարվելով «Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկի մասին»
օրենքի 2-րդ հոդվածի 3-րդ մասով և 20-րդ հոդվածի «ե» կետով, «Բանկերի և բանկային
գործունեության մասին» օրենքի 54.1-րդ հոդվածի 1-ին մասով և Հայաստանի
Հանրապետության կենտրոնական բանկի խորհրդի 2019 թվականի փետրվարի 4-ի թիվ 16-Ն
որոշմամբ հաստատված «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի
սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման կարգով»՝ Հայաստանի
Հանրապետության կենտրոնական բանկի խորհուրդը

Ո Ր Ո Շ ՈՒ Մ Է .

1. Բանկերի կապիտալի հակացիկլիկ շեմը սահմանել ռիսկով կշռված ակտիվների 1.5%-ի չափով:
Սահմանված դրույքաչափը ուժի մեջ է (պարտադիր է կատարման) 2023 թվականի օգոստոսի 1-
ից:
2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում պաշտոնական հրապարակմանը հաջորդող օրը:

**Հայաստանի Հանրապետության
կենտրոնական բանկի նախագահ**

Մ. Գալստյան

Երևան

ՀԻՄՆԱՎՈՐՈՒՄ

Կապիտալի հակացիկլիկ շեմի (2022թ. չորրորդ եռամսյակ)

2023 թվականի հունվարի 24-ի նիստում ԿԲ խորհուրդը որոշեց կապիտալի հակացիկլիկ շեմը սահմանել ռիսկով կշռված ակտիվների 1.5%-ի չափով¹:

Հակացիկլիկ շեմի սահմանված դրույքաչափը ուժի մեջ է 2023 թվականի օգոստոսի 1-ից:

Կապիտալի հակացիկլիկ շեմի (այսուհետ նաև կապիտալի հակացիկլիկ բուժեր (ԿՀԲ)) վերաբերյալ որոշումը կայացնելիս Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկն առաջնորդվել է մակրո-ֆինանսական և վարկավորման շուկայի զարգացումների համապարփակ վերլուծությամբ: Մասնավորապես՝

1. Ֆինանսական ցիկլի ինդեքսը նախորդ եռամսյակի համեմատ շարունակել է աճել: 2022թ. 4-րդ եռամսյակում նախորդ եռամսյակի համեմատ վարկային շուկայում արձանագրվել է ակտիվության աճ, որը նկատելի է եղել վարկավորման բոլոր ուղղություններով: Բացառությամբ հիպոտեկային վարկավորման (որտեղ առկա են գերտաքացման ռիսկեր), վարկավորման մյուս ոլորտներում ընթացիկ զարգացումները և ֆինանսական ցիկլի դիրքը վկայում են, որ ֆինանսական համակարգում ցիկլային համակարգային ռիսկերը ընդհանուր առմամբ հավասարակշռված են (ո՛չ թերագնահատված են, և ո՛չ էլ գերագնահատված):

2022թ. չորրորդ եռամսյակի համար գնահատված վարկեր/ՀՆԱ ցուցանիշը² նվազել և կազմել է շուրջ 64%, և վերջինս շարունակում է պահպանվել իր երկարաժամկետ տրենդից (վարկեր/ՀՆԱ ճեղքվածք) ցածր մակարդակում (-9 տոկոսային կետ): Նշված զարգացումները հիմնականում պայմանավորված են վարկերի աճի համեմատ ՀՆԱ առաջանցիկ աճով:

2. Հիպոտեկային վարկավորման ոլորտում պահպանվել է աճի բարձր տեմպը, որը միաժամանակ ուղեկցվել է նաև անշարժ գույքի գների աճով: Հաշվի առնելով, որ անշարժ գույքի ձեռքբերման նպատակով պարտքային ֆինանսավորման ծավալների և անշարժ գույքի գների աճերը համարվում են բնույթով միմյանց

¹ Համաձայն «Բանկերի կապիտալի համարժեքության նորմատիվի սահմանաչափից բարձր շեմերի սահմանման և հաշվարկման» կարգի 12-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կենտրոնական բանկը յուրաքանչյուր եռամսյակ սահմանում է կապիտալի հակացիկլիկ շեմը (այսուհետ նաև կապիտալի հակացիկլիկ բուժեր (ԿՀԲ)): Կենտրոնական բանկը ԿՀԲ-ն սահմանելիս առաջնորդվում է «Կապիտալի հակացիկլիկ շեմի սահմանման հիմքում ընկած ընդհանուր մեթոդաբանությունը» փաստաթղթի դրույթներով:

² Ֆինանսական հատվածի կողմից տնտեսությանը տրամադրված վարկային պորտֆելի (ներառյալ լիզինգը և ֆակտորինգը) կշիռն է ՀՆԱ-ում (%-ով): 2022թ. չորրորդ եռամսյակի գնահատականը նախնական է և կարող է հետագայում փոփոխվել՝ կախված ՀՆԱ փաստացի տվյալների հիման վրա վերահաշվարկի արդյունքներից:

փոխանուցող՝ ԿԲ-ը գնահատում է, որ անշարժ գույքի շուկայում պահպանվում են գերտաքացման ռիսկեր:

3. Համաձայն իրականացված մակրո սթրես թեստավորման գնահատականների, ֆինանսական ցիկլի ընթացիկ փուլում ենթադրյալ շոկի արդյունքում առաջացող անսպասելի կորուստների կլանման համար անհրաժեշտ հավելյալ կապիտալի մեծությունը գնահատվում է շուրջ 84 մլրդ. ՀՀ դրամ կամ ռիսկով կշռված ակտիվների 1.43%-ը:
4. Ներկայումս բանկային համակարգը բնութագրվում է շահութաբերության և կապիտալի համարժեքության բարձր մակարդակով: Այս պարագայում ԿՀԲ կուտակման ծախքերը ցածր են, և բանկերի կապիտալիզացիայի ներկա մակարդակը բավարար է տնտեսության վարկավորման բնականոն տեմպերի պահպանման համար:
5. Աշխարհաքաղաքական պահպանվող անորոշությունների պայմաններում համակարգային (ցիկլային) ռիսկերի նյութականացման հավանականությունը շարունակում է մնալ բարձր՝ ինչպես ազդեցության չափի, այնպես էլ արագության առումով: Ընթացիկ պայմաններում ՀՀ կենտրոնական բանկը կարևորում է կապիտալի բուֆերների կուտակման միջոցով ՀՀ բանկային համակարգի կողմից ապագա հնարավոր շոկերին դիմակայելու (resilience), ինչպես նաև շոկային իրավիճակներում տնտեսության անխափան վարկավորման ունակության բարձրացումը:

Վերը նկարագրված փաստերի համապարփակ վերլուծության արդյունքում կենտրոնական բանկը նպատակահարմար է գտնում բարձրացնել ԿՀԲ դրույքաչափը՝ սահմանելով այն 1.5% մակարդակում³: ԿՀԲ դրույքաչափի ապագա փոփոխությունները (ինչպես բարձրացման, այնպես էլ իջեցման ուղղությամբ) կաճանցվեն մակրոֆինանսական պայմանների, անորոշությունների և համակարգային ռիսկերի զարգացման հետագա ընթացքից:

³ Տվյալ դրույքաչափը ուժի մեջ է 2023թ. օգոստոսի 1-ից: 2023թ. մայիսի 1-ի դրությամբ բանկերը պետք է բավարարեն ԿՀԲ 1% դրույքաչափի պահանջը՝ համաձայն ՀՀ ԿԲ խորհրդի [050.0179](https://www.nbrb.by/ru/press-releases/20230501) Լ որոշման